

ՀԱՅՐ ԴԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ ԵՎ ՎԱԿԴԻՄԻՐ ՍՏԱՍՈՎԻ
ԱՌՆՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ*

ՎԱԶԱԳԱՆ ԱՎԱԳՅԱՆ

Բանալի բառեր՝ Հայր Ղևոնդ Ալիշան, Ստասով, գիտնական, ռուս, հայ, մշակույթ, առնչություն, նամակագրություն, ուսումնասիրություն, դիտարկում, գնահատանք, վարկած:

Նախաբան

Զբաղվելով սրբափոխական ու արևելյան հին զարդաքանդակների ուսումնասիրությամբ՝ ռուս նշանավոր քննադատ, երաժշտության տեսաբան և հնագետ Վլադիմիր Ստասովը (1824–1906) 1880 թ. ճանապարհորդում է Եվրոպայի ու Արևելքի մի շարք երկրներով, լինում տարբեր քաղաքներում, այդ թվում՝ Վենետիկում: Այստեղ նա այցելում է Մխիթարյաններին և ծանոթանում հայ մշակույթի մեծ երախտավոր Հայր Ղևոնդ Ալիշանի (1820–1901) հետ¹, «որի մասին նա հեռվից բեկ էր ...»²: Իրավամբ, նա XIX դարավերջի ամենամեծ հայ գիտնականն էր³, ով ուներ համակոորդացիոն հոգսի և անուն, ու ամենեին պատահական չէ՝ Ստասովի համար միակ հարմար գիտնական թեկնածուն և առավել հարմար ուղեկից, գրուցակից դառնում է հենց նա⁴: Հայր Ղևոնդ Ալիշանի օգնությամբ Ստասովն ուսումնասիրում է Մխիթարյանների մոտ եղած հայ հին ձեռագրերի մանրանկարչությունը: Այդ օրերին էլ, թերևս, ստեղծվում է նրանց փոխադարձ համակրանքը, անկեղծ գնահատումը: Ալիշանը նախ ռուս գիտնականի վրա չափազանց մեծ տպավորություն է թողնում Քրանսերենի խմայությունը: Իսկ հետագա հանդիպումների ժամանակ, երբ նա որևէ հետաքրքրող հարցի անդրադառնալիս անգիր վկայակոչումներ է անում ոչ միայն Քրանսերեն, այլև խալիբեն, անգլերեն ու արևելյան լեզուներից, մանրամասն բացատրություններ տալիս Հին Արևելքի արվեստի առանձնահատկությունների վերաբերյալ, որոնք, անշուշտ, մեծ օգուտ պիտի բերեր Ստասովին՝ գրվելիք աշխատությունն առավել կատարյալ դարձնելու համար, ռուս մտավորականը չափազանց տպավորվում է և հաճելիորեն զարմանում: Ստասովն անսահման շնորհապարտությամբ հեռանում է Սբ. Ղազարից⁵:

* Ներկայացվել է 05. V. 2021 թ., գրախոսվել է 10. V. 2021 թ., ընդունվել է տպագրության 01. VI. 2021 թ.:

¹ Տե՛ս «Գրական թերթ» (Երևան), 03. I. 1969:

² Ս. Ս ա ռ գ ս յ ա ն. Ալիշան. պատկերներ կյանքից, Երևան, 1978, էջ 162:

³ Ղ. Ա լ ի շ ա ն. Նամակներ (տեքստը, առաջ. և ծանոթ. Ս. Շախկյանի), Երևան, 1969, էջ 8:

⁴ Տե՛ս Ս. Ս ա ռ գ ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 162:

⁵ Նույն տեղում, էջ 162–163:

Հայր Դևոնդ Ալիշանի նամակները Վ. Ստասովին

1886 թ. լույս է տեսնում Վ. Ստասովի «Հայկական ձեռագրերը և նրանց զարդաքանդակները» արժեքավոր ուսումնասիրությունը, իսկ 1887 թ. «Ալավոնական և արևելյան զարդարվեստ» (նաև՝ «Ալավոնական և արևելյան զարդաքանդակ») մեծածավալ աշխատությունը, որտեղ էական տեղ էր հատկացված հայկական մանրանկարչությանը⁶։ Հայր Դևոնդ Ալիշանը ֆրանսերենով հինգ նամակ է ուղարկում վերոհիշյալ աշխատությունների կապակցությամբ, որոնք գտնվում են Սանկտ Պետերբուրգի արխիվներում, և հայերեն թարգմանել է Հայկ Գասպարյանը⁷։

Այդ նամակները թեև սովորաբար սկսում են ժանրաձևին բնորոշ «Թանկագին պարոն», «Հարգարժան և թանկագին պարոն» դիմելաձևերով և ավարտում «Ձեր խոնարհ ծառան», «Ձեր Գերազանցության խոնարհ ծառա Հայր Դևոնդ Ալիշան», «(Ձեր – Վ. Ա.) խոնարհ ծառան եմ ես՝ լի բարեկամական և երկյուղած պատկառանքով», «Թույլ տվեք ինձի արտահայտելու, պարոն, Ձեզի հանդեպ ունեցած իմ խորին ակնածանքս ու երախտագիտություն» վերջնական արտահայտություններով, այնուամենայնիվ, պատկառոտ այդ դարձվածները մեծարելիությանը զուգահեռ՝ ունեն նաև հարազատության նրբերանգ։

Առաջին նամակը, որը գրել է Հայր Դևոնդ Ալիշանը Ստասովին, թվագրված է 1886 թ. հունիսի 1-ով։ Այստեղ նա, ի պատասխան Ստասովի, ըստ երևույթին, շատ ջերմ նամակի, իր ուրախությունն է հայտնում վերջինիս այն «նշանակալից և վիթխարի աշխատության մոտակա հրատարակության» («Հայկական ձեռագրերը և նրանց զարդաքանդակները» – Վ. Ա.) առիթով, որին ինքը սպասում է անհամբեր, և խոստովանում է չի կարող պարծենալ իր համեստ «Սիսուան»-ով⁸, որն արդեն, ինչպես հասկանում ենք չարադրան-

⁶ «Գրական թերթ», 03. I. 1969: Ս. Շտիկյանը Հայր Դևոնդ Ալիշանի՝ իր կազմած նամականու ծանոթագրությունների բաժնում «Ալավոնական և արևելյան զարդարվեստ» աշխատության հրատարակման տարեթիվը, հավանաբար, շփոթությամբ նշում է 1884 թվականը (տե՛ս Դ. Ալիշան. նշվ. աշխ., էջ 243, 246, 249), մինչդեռ նույն գրքում՝ Հայր Դևոնդ Ալիշանի Վ. Ստասովին ուղղված առաջին նամակին կցված ծանոթագրության մեջ, վկայում է 1887 թվականը (նույն տեղում, էջ 258)։

«Գրական թերթ», 03. I. 1969: Հայր Դևոնդ Ալիշանի Վ. Ստասովին ուղղված այդ հինգ նամակներն ընդգրկված են նաև Դ. Ալիշանի Ս. Շտիկյանի կազմած նամականու հավելվածում, որտեղ կազմողը ծանոթագրում է, թե նամակներն արդեն շարադրված էր, երբ Իսմա Սաֆրազբեկյանը (ըստ Ս. Շտիկյանի) Սանկտ Պետերբուրգում Պուշկինյան տանն աշխատելիս գտել և թարգմանել տալով «Գրական թերթ»-ում տպագրել էր այդ նամակները (Դ. Ալիշան. նշվ. աշխ., էջ 257)։ Նամակները տե՛ս նաև Հայր Դևոնդ Ալիշան. Նամակներ, հ. 1 (1840–1870), Երևան, 2020, նույնի՝ Նամակներ, հ. 2 (1871–1889), Երևան, 2021, նույնի՝ Նամակներ, հ. 3 (1890–1901), Երևան, 2021: Այս հրատարակություններից հղումները կտրվեն շարադրանքում փակագծերում նշելով հատորը և էջը։

⁸ 1850-ական թվականներից սկսած՝ Ալիշանը ձեռնամուխ է եղել պատմական Հայաստանի բոլոր տասնհինգ «աշխարհների» մասին պատմաաշխարհագրական ուսումնասիրություններ գրելու գործին, որը, ըստ հեղինակի նախնական մտահղացման, պետք է կազմեր 15–20 հատոր։ Այս վիթխարի նախաձեռնութ-

քից, ծանոթ էր ռուս գիտնականին (հ. 2, էջ 535)⁹։ Թերևս, առերևույթ նամակագրական չեզոք թվացող այս տեղեկությունը, որն անում է Հայր Ղևոնդ Ալիշանը, ցույց է տալիս ոչ միայն հեղինակի համեստությունը, այլև այն հետաքրքրությունը, որ Ստասովն ունեցել է նրա գիտական գործունեության նկատմամբ։ Նամակում, մինչև ռուս արվեստաբանի հարցերին անդրադառնալը, Ալիշանը, ընդմիջարկելով իր խոսքը, նորատիպ «Սիսուան»-ի կապակցությամբ մի դիտարկում է անում, որը ցույց է տալիս թուրքական իշխանությունների վերաբերմունքը հայ մշակույթի նկատմամբ. «... օրերս Օսմանյան կառավարությունը արգելեց երկի հրատարակությունը (ընդգծումը Վ. Ստասովինն է – Վ. Ա.)¹⁰։ Ինչ տարբերություն թրքական կառավարության դիրքորոշման և Ձեր կայսրի քաջալերանքի միջև» (հ. 2, էջ 535), – գրում է նամակագիրը։ Ուշադրության է արժանի նամակի ձեռագրի վրա հասցեատիրոջ՝ Ստասովի կողմից արված տողի ընդգծումը, որը թեկուզ լուրջությամբ ակնարկում է նաև վերջինիս անհանգստությունը թուրքիայի դրսևորած հայամերձ քաղաքականության նկատմամբ¹¹։ Նամակում ակնհայտ է նաև Ալիշանի համակրանքը և դրվատանքը ռուսական իշխանությունների հանդեպ, որն արտահայտում է նրա «դիվանագիտական

յունը, սակայն, հեղինակը չկարողացավ իրականացնել։ Իր կյանքի ընթացքում նա հրատարակեց չորս «աշխարհների» մասին իր հանրահայտ ուսումնասիրությունները, որոնցից մեկը հենց նվիրված էր Սիսուանին՝ Հայկական Կիլիկիային («Սիսուան։ Համագրություն հայկական Կիլիկիոյ եւ Լեւոն Մեծագործ»)։ Այն տպագրվեց 1885 թ. Վենետիկում (տե՛ս Ալիշանը ժամանակակիցների հուշերում, Երևան, 1974, էջ 234)։

⁹ «Սիսուանի» ֆրանսերեն համառոտ թարգմանությունը (թարգմ. Գևորգ Պալյանի) հրատարակվել է 1899 թ. Վենետիկում (տե՛ս Ալիշանը ժամանակակիցների հուշերում, էջ 242)։ Ուրեմն՝ «Սիսուանը» Վ. Ստասովին, ամենայն հավանականությամբ, կարող էր ծանոթ լինել սոսկ որպես հրատարակություն։

¹⁰ Այս նախադասությունը Հայր Ղևոնդ Ալիշանի նամակների նորատիպ ժողովածուում ընդգծված չէ, մինչդեռ Ի. Սաֆրազբեկյանի և Ս. Շտիկյանի կազմած նամականիներում այն մասնակի տարբերությամբ («Այն հենց նոր արգելքի տակ է դրել թուրքական կառավարությունը») տպված է մզացված տառերով. համապատասխանաբար տե՛ս «Գրական թերթ», 03. I. 1969, Ղ. Ա ի չ ա ն. նշվ. աշխ., էջ 257։ Մենք հավատարիմ ենք մնացել նախնական տարբերակին։

¹¹ 1883 թ. սկզբներին թուրքական կառավարությունն ընդունեց մի օրինագիծ, որով արգելում էր իրենց երկրից դուրս հրատարակված հայերեն գրքերի մուտքը Օսմանյան պետության սահմաններ՝ այն պատճառաբանությամբ, թե, իբր, գրանք պղտորում են թուրքահպատակ ժողովուրդների միտքը և այդպիսով պատճառ դառնում Օսմանյան կայսրության ամբողջականության քայքայմանը (տե՛ս Ղ. Ա ի չ ա ն. նշվ. աշխ., էջ 219)։ Այդ պատճառով նաև թուրքական կառավարությունը, իմանալով, որ «Սիսուանը» պարունակում է Օսմանյան պետության լծի տակ ընկած Կիլիկիայի երկրամասում ապրող հայ ժողովրդի անցյալի պատմությունը, արգելեց այդ գրքի մուտքը Թուրքիա։ Ալիշանը թուրքական իշխանությունների այդ արարքի մասին է դառնացած գանգատվում իր նամակում (տե՛ս Ա. Ա դ ա մ - յ ա ն. Ղևոնդ Ալիշանի անտիպ նամակներից. – «Բանբեր Հայաստանի արխիվների», 1965, № 3, էջ 114)։ Մինչդեռ «Այրարատը» (1890) և «Սիսականը» (1893), որը նվիրված էր Սյունյաց աշխարհին, ռուսական իշխանություններն թույլատրեցին իրենց երկրի տարածք [տե՛ս Հ ա յ Ր Ղ և ո ն դ Ա ի չ ա ն. Նամականի, հ. 1 (1840–1870), էջ XIV–XV]։

ունակությունները» (Հ. 1, էջ XV): Այդ տողերում երևում է նաև մտերիմին իր ապրումները, մտորումները փոխանցելու անմիջականությունը:

Նամակի հետագա շարադրանքում Հայր Դևոնդ Ալիշանը մեկ առ մեկ՝ հերթականությամբ, դրսևորելով խորին պատասխանատվություն և հոգածություն, պատասխանում է Վ. Ստասովի, ամենայն հավանականությամբ, Հայ մանրանկարչության արվեստի վերաբերյալ տարբեր աղբյուրների ճշման համար իրեն ուղղված հարցերին ու ակնկալիք հայտնում, որ շուտով կունենա ուսուցիչական աշխատությունը՝ ֆրանսերեն կամ ֆրանսերեն հարակցությամբ, ինչը որ ինքն է շատ ցանկանում ուսանել չիմանալու պատճառով: Իսկ երբ պարզվում է, որ Ստասովը իսկապես մտադիր է իր գործին զուգակցել ֆրանսերեն թարգմանությունը, Ալիշանը, ինչպես գրում է ուսուցիչներին ուղղված հաջորդ՝ 1886 թ. հունիսի 12-ի նամակում, դժվարությամբ է կարողանում զսպել իր սրտի «մեջ հնչող ցնծագին «Հուսուհի»» (Հ. 2, էջ 539): Այնուհետև Ստասովին հղելով միաբանների ու աբբաճոր բարեկամական ողջույնները՝ եզրափակում է նամակը:

Շուրջ հնգամյա ընդմիջումից հետո է միայն Հայր Դևոնդ Ալիշանի ու Վ. Ստասովի նամակագրությունը վերականգնվում: Այս անգամ՝ արդեն 1891 թ. ապրիլի 19-ով (մայիսի 1), Ստասովին հասցեագրած նամակում նա, իմանալով վերջինիս նորատիպ «Ալավոնական և արևելյան զարդաքանդակ» խորագրով ուսումնասիրության հրատարակված լինելու մասին, հույս է հայտնում, որ այն շուտով կհասնի իրեն, ու հատկապես ցանկանում է, որ «ատիկա ըլլար անձամբ իր՝ երկասիրության արժանավոր հեղինակի ձեռքով» (Հ. 3, էջ 59): Հայ գիտնականի՝ հիշյալ գիրքը ունենալու ցանկությունը, ինչպես տեղեկանում ենք նրա հաջորդ՝ 1891 թ. հոկտեմբերի 21-ով (նոյեմբերի 2) թվագրված նամակից, առավել լարել ու բորբոքել էր միաբանություն այցելած, ձեռագիր մանրանկարներով զբաղվող երկու ուսուցիչների հիացական խոսքը՝ այդ աշխատության մասին (Հ. 3, էջ 65): Ի դեպ, նկատենք այն հաճելի իրողությունը, որ հիշյալ վկայությունն որքան էլ կողմնակիորեն, համեմայնողեպս, դարձյալ գալիս է փաստելու ուսուցիչների անսխալության հետաքրքրությունը Հայ մշակույթով:

Հետագայում անհանգստացած Ստասովի «Ալավոնական և արևելյան զարդաքանդակ» աշխատության իրեն հասնելու պատճառով Հայր Դևոնդ Ալիշանը Պետերբուրգում գտնվող մտերիմներից Կարապետ Եղյանին խնդրում է իմանալ, թե ուսուցիչական ու միջոցով է գիրքն ուղարկել իրեն (Հ. 3, էջ 86):

Հայր Դևոնդ Ալիշանի հաջորդ՝ 1892 թ. նոյեմբերի 2-ին Ստասովին գրած նամակից տեղեկանում ենք, որ այնքան բաղձալի ցանկությունն արդեն իրականացել է: Խանդավառ, հիացական տոնով է նա սկսում իր խոսքը Ստասովի՝ այնքան սպասված աշխատության վերաբերյալ՝ նկատի ունենալով հատկապես նրա՝ Հայ հին գեղարվեստի նկատմամբ ունեցած մեծ սերն ու ցուցաբերած ուշադրությունը: «Հարգարժան և թանկագին պարոն, Այլևս անշրջելի փաստ է: Ձեր կոթողային աշխատությունը՝ «Ալավոնական և արևելյան զարդարվեստը», մեր ընթերցասրահի սեղանին է ի հիացումն մեր հոգևոր հասարակության ... Ինձի համար պատիվ է և ուրախություն՝ ատիկա Ձեզի հայտնել՝ ատոր միացնելով միաբան եղբայրներուս և Գերապայծառ աբբաճոր շնորհակալությունները: Արդեն, — ինչպես գրում է Հայր Դևոնդ Ալիշանը, —

երկու-երեք անգամ դիտած եմ սքանչելի նկարազարդումները և նորեն պիտի դիտեմ: Բան մը զիս ցնցած է առաջին իսկ հայացքեն. Սլավոնական կամ արևելյան բոլոր այդ ժողովուրդներու ոճի և մեր՝ հայկական ոճի միջև եղած նմանությունը, և մենք երջանիկ ենք, որ Դուք զայն կը ներկայացնեք մյուս մշակութային կողքին» (Հ. 3, էջ 88):

Ճիշտ է, որոշ, մասնավորապես՝ առանձին տեխնիկական հարցերի առնչությամբ, Ալիշանն անում է «քանի մը ոչ այնքան արժեքավոր դիտարկում», սակայն գիտնականն իր նամակն ավարտում է գովեստի շնորհակալ խոսքով: Ուշագրավ է, որ երբ մեզանում դեռ վարդապետ Գարեգին Հովսեփյանն սկսում է զբաղվել հայ մանրանկարչության արվեստի ուսումնասիրությամբ և նյութեր հավաքելու նպատակով դիմում է Հայր Դևոնդ Ալիշանին ու խորհուրդներ հարցնում նրանից, ծերունազարդ և բազմազբաղ գիտնականը, խրախուսելով երիտասարդին ու նրա թեմայի վերաբերյալ աղբյուրներ մատնացույց անելով, միաժամանակ Հովսեփյանին հանձնարարում է ձեռք բերել Վլադիմիր Ստասովի հիշյալ «Սլավոնական և արևելյան զարդարվեստ» ուսումնասիրությունը և օգտագործել այն¹²: Իսկ սա նշանակում է, որ Ստասովի այդ «ընտիր գործը» ուղենշային նշանակություն է ունեցել Ալիշանի համար¹³:

Վերջում վարկածային մի դիտարկում անենք: Հայտնի է, որ 1896 թ. Հայր Դևոնդ Ալիշանը ընտրվում է Պետերբուրգի հնէաբանական ընկերության պատվավոր անդամ¹⁴: Այդ կապակցությամբ, «ինչպես պահանջում է էթիկան», նա գրավոր պատասխանով շնորհակալական խոսք է փոխանցում ընկերության նախագահ Աֆանասի Բիչկովին, որտեղ հայտնելով իր երախտագիտությունը՝ միաժամանակ գրում է, թե դժվարանում է գուշակել, թե ով կարող էր առաջինն առաջարկել իր թեկնածությունն այդ բարձր կոչման համար¹⁵: Ձի բացառվում, որ դա կարող էր լինել հենց Վլադիմիր Ստասովը, ով մոտիկից ճանաչում էր և մեծ համակրանք ուներ Հայր Դևոնդ Ալիշանի նկատմամբ:

Եզրակացություն

Ահա այսպես տարիների ընթացքում հարազատորեն, փոխադարձ ակնածանքով ընկերակցեցին Հայր Դևոնդ Ալիշանն ու Վլադիմիր Ստասովը: Նրանց հանդիպումն ու ծանոթությունը, որ սկիզբ առավ 1880 թ. Սբ. Ղազար կղզում Ստասովի գիտական-գործնական այցելության ժամանակ, կարճ տևեց: Սակայն նրանք իրենց սրտամոտ բարեկամությունը պահեցին ու խորացրին նամակագրությամբ: Դա պիտի բացատրել թե՛ երկու անձանց գիտական-մշակութային հետաքրքրություններով և թե՛, ինչու ոչ, մարդկային փոխադարձ համակրանքով:

¹² Տե՛ս Դ. Ալիշան. նշվ. աշխ., էջ 184–185: Ի դեպ, Գ. Հովսեփյանին ուղղված այս նամակը վրիպել է Հայր Դևոնդ Ալիշանի եռահատոր «Նամականին» կազմողների աչքից և տեղ չի գտել դրանցում:

¹³ Ա. Աղամյան. նշվ. հրապ., էջ 114:

¹⁴ Տե՛ս Ս. Շտիկյան. Ալիշանը և Պետերբուրգի հնէաբանական ընկերությունը. — «Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի տեղեկագիր», 1964, № 2, էջ 79:

¹⁵ Նույն տեղում, էջ 82:

Վաչագան Ավագյան – բ. գ. թ., ԵՊՀ ակադեմիկոս Հր. Թամրազյանի անվան Հայ նոր գրականության պատմության ամբիոնի ղեկավար: Գիտական հետաքրքրությունները՝ Հայ ժողովրդական բանահյուսություն, Հայ գրականություն: Հեղինակ է 1 մեթոդական ձեռնարկի և շուրջ 30 հոդվածի:
avagyan.vachik@yandex.ru

REFERENCES

- Adamyan A. Ghevond Alishani antip namaknerits. – “Banber Hayastani arkhivneri”, 1965, № 3 (In Armenian).
Alishane jamanakitsneri husherum, Yerevan, 1974 (In Armenian).
“Grakan tert” (Yerevan), 03. I. 1969 (In Armenian).
Hayr Ghevond Alishan. Namakani, h. 1 (1840–1870), Yerevan, 2020; h. 2 (1871–1889), Yerevan, 2021; h. 3 (1890–1901), Yerevan, 2021 (In Armenian).
Alishan Gh. Namakner (tekste, araj. yev tsanot. S. Shtikyani), Yerevan, 1969 (In Armenian).
Shtikyan S. Alishane yev Peterburgi hneabanakan enkerutyune. – “Haykakan SSR Gitutyunneri akademiayi teghekgagir”, 1964, № 2 (In Armenian).
Sargsyan S. Alishan. patkerner kyankits, Yerevan, 1978 (In Armenian).

ИЗ ИСТОРИИ ОТНОШЕНИЙ ОТЦА ГЕВОНДА АЛИШАНА И ВЛАДИМИРА СТАСОВА

ВАЧАГАН АВАГЯН

Резюме

Ключевые слова: Отец Гевонд Алишан, Стасов, ученый, русский, армянин, культура, отношения, переписка, исследование, наблюдение, оценка, гипотеза.

Известный русский ученый, выдающийся теоретик искусства и археолог Владимир Стасов (1824–1906), занимавшийся изучением древнеславянских и восточных орнаментов, в 1880 г. побывал в ряде городов Европы и Востока. В том же году он побывал в Венеции, где посетил Конгрегацию мхитаристов и встретился с выдающимся деятелем армянской культуры Отцом Гевондом Алишаном (1820–1901). С помощью Алишана Стасов изучал миниатюры древнеармянских рукописей из коллекции мхитаристов.

В 1886 г. было опубликовано ценное исследование Стасова «Армянские рукописи и орнаментации», а в 1887 г. – колоссальный труд «Славянский и восточный орнамент», в котором он также уделит важное место армянской миниатюрной живописи. Отец Гевонд Алишан написал Стасову пять писем на французском языке в связи с вышеуказанными работами. Письма показывают, как Алишан, с его удивительным знанием различных произведений армянской литературы, их рукописных источников, помогал и направлял Стасова, добросовестно отвечал на его филологические вопросы.

Из этих писем также очевидно, что два выдающихся ученых в целом интересовались научной деятельностью друг друга, и особенно заметен энтузиазм Алишана по поводу любви Стасова к древнеармянскому искусству.

Вачаган Авагян – к. филол. н., доцент кафедры новой армянской литературы им. акад. Гр. Тамразяна ЕГУ. Научные интересы: армянский народный фольклор, армянская литература. Автор 1 методического пособия и около 30 статей. avagyan.vachik@yandex.ru

ON RELATIONS BETWEEN FATHER GHEVOND ALISHAN AND VLADIMIR STASOV

VACHAGAN AVAGYAN

Summary

Key words: Father Alishan, Stasov, scientist, Russian, Armenian, culture, relations, correspondence, study, observation, assessment, hypothesis.

Famous Russian academician, prominent art theorist and archaeologist Vladimir Stasov (1824–1906), while studying ancient Slavonic and Eastern ornamental sculptures, in 1880 visited a number of cities in Europe and the East. In Venice he visited the Mekhitarist congregation and met Father Ghevond Alishan (1820–1901) – a prominent figure of Armenian culture. With Alishan's assistance, Stasov studied the miniature paintings of ancient Armenian manuscripts from Mekhitarian collection.

In 1886, Stasov published his valuable study “Armenian Manuscripts and Their Ornaments,” and in 1887, his large-scale work “Slavonic and Oriental Ornaments,” in which he also gave an important place to Armenian miniature painting. Father Ghevond Alishan sent five letters in French to Stasov in connection with the abovementioned works. The letters indicate how Alishan, with his amazing knowledge of various works and the manuscript sources of Armenian literature, helped and guided Stasov, answering his philological inquiries scrupulously.

It is also evident in these letters that the two great scholars were generally interested in each other's scientific activities, especially Alishan's enthusiasm for Stasov's love towards ancient Armenian art.

Vachagan Avagyan – Candidate of Sciences in Philology, Associate Professor of the YSU Chair of New Armenian Literature after Hr. Tamrazyan. Scientific interests: Armenian folklore, Armenian literature. Author of 1 methodical handbook and more than 30 articles. avagyan.vachik@yandex.ru